ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2026 թվականի N 3064-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 60 ԼՈՒՍԱԿԵՏԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 60 լուսակետերի մոնտաժման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի